

Կ-374-30.10.2013,06.03.2014-ՊԻ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 21-ի դատական օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել 11.1-ին հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 11.1. Գործերի պատահական բաշխման սկզբունքը

1. Դատավորների միջեւ գործերը բաշխվում են պատահական ընտրության սկզբունքի հիման վրա՝ սույն օրենսգրքի 2.1 գլխով սահմանված կարգով»:

**Հոդված 2.** Օրենսգիրքը լրացնել 21.1-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 21.1 Դատական վիճակագրության վարումը եւ հրապարակայնության ապահովումը

1. Դատարանների գործունեության արդյունավետությունը, թափանցիկությունը եւ հանրության առջեւ հաշվետվողականությունն ապահովելու նպատակով դատարանները վարում են դատական վիճակագրություն:

2. Դատական վիճակագրությանը ներկայացվող պահանջներն են՝

1) վիճակագրության օբյեկտիվությունը, հիմնավորվածությունը, անաչառությունը.

2) վիճակագրական տվյալների արժանահավատությունը, ճշտությունը, համադրելիությունը ժամանակի եւ տարածության մեջ.

3) վիճակագրական տեղեկատվության արդիականությունը, կայունությունը եւ ամբողջականությունը.

4) վիճակագրական ամփոփ տվյալների պարբերական հրապարակումը.

5) վիճակագրական տեղեկատվության մատչելիությունը, հրապարակայնությունը:

3. Կառավարությունը սահմանում է ըստ դատական գործի տեսակի դատական գործի վիճակագրական քարտի ձևն ու բովանդակությունը, պարտադիր հրապարակման ենթակա վիճակագրական տվյալների (տեղեկությունների) ցանկը եւ հրապարակման կարգը, վիճակագրական հաշվետվությունների բովանդակության նկարագրությունը: Պարտադիր հրապարակվող վիճակագրական տվյալները (տեղեկությունները) պետք է ներառեն առնվազն սույն հոդվածի 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ մասերով նախատեսված տվյալները (տեղեկությունները):

4. Դատարանների նախագահների խորհուրդը սահմանում է դատական գործի վիճակագրական քարտի լրացման կարգը, դատական վիճակագրության վարման կարգը, ինչպես նաեւ՝ դատական

իշխանության գործառույթների արդյունավետ իրականացման կարիքներից ելնելով, կարող է սահմանել դատական վիճակագրության վարման լրացուցիչ վիճակագրական դասակարգիչներ:

5. Վիճակագրական դասակարգիչներում փոփոխություններ կատարվելու դեպքում դրանք կիրառում են միայն փոփոխություններ կատարելուն հաջորդող տարվանից:

6. Դատական վիճակագրության հավաքումն ու վարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտը (այսուհետ՝ Դատական դեպարտամենտ):

7. Դատական դեպարտամենտը Դատարանների նախագահների խորհրդի որոշմամբ սահմանված կարգով եւ ժամկետներում Դատարանների նախագահների խորհրդի հաստատմանն է ներկայացնում դատարանների գործունեության կիսամյակային եւ տարեկան վիճակագրական տվյալների վերաբերյալ հաշվետվությունները:

8. Դատական դեպարտամենտն ապահովում է դատական գործի վիճակագրական քարտի հիման վրա հավաքված վիճակագրական տվյալների մատչելիությունը հանրության համար, բացառությամբ օրենքով նախատեսված հրապարակման ոչ ենթակա տեղեկատվության: Վիճակագրական տվյալները Դատական դեպարտամենտը հրապարակում է դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում վիճակագրական տվյալների հրապարակման համար առանձնացված հատուկ բաժնում:

9. Առաջին ատյանի յուրաքանչյուր դատարանի եւ դատավորի վերաբերյալ՝ ըստ քրեական, քաղաքացիական եւ վարչական գործերի, հրապարակվում են, մասնավորապես, հետեւյալ տվյալները (տեղեկությունները).

1) դատավորների քանակը,

2) հաշվետու ժամանակաշրջանի սկզբում նախորդ հաշվետու ժամանակաշրջանից փոխանցված գործերի ընդհանուր քանակը,

3) հաշվետու ժամանակաշրջանում ստացված գործերի ընդհանուր քանակը,

4) հաշվետու ժամանակաշրջանում ավարտված գործերի ընդհանուր քանակը (այդ թվում՝ գործն ըստ էության լուծելու, գործի վարույթը կարճելու եւ այլ հիմքերով ավարտված),

5) հաշվետու ժամանակաշրջանում կասեցված վարույթներով գործերի ընդհանուր քանակը,

6) գործի քննության միջին տեւողությունն ըստ նիստերի քանակի,

7) գործի քննության միջին տեւողությունն ըստ ժամանակի (հաշվարկի միավոր՝ ժամ), այդ թվում՝ ըստ դատաքննության նախապատրաստության, դատաքննության եւ դատական ակտի կայացման փուլերի միջին տեւողության,

8) մինչդատական վարույթի գործերն՝ ըստ տեսակների,

9) հաշվետու ժամանակաշրջանում անավարտ գործերի ընդհանուր քանակը,

10) բողոքարկված դատական ակտերի քանակը՝ ըստ տեսակների,

11) բեկանված դատական ակտերի քանակը՝ ըստ տեսակների:

10. Վերաքննիչ յուրաքանչյուր դատարանի, դատական կազմի եւ դատավորի վերաբերյալ հրապարակվում են, մասնավորապես, հետեւյալ տվյալները (տեղեկությունները).

1) սույն հոդվածի 9-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-7-րդ, 9-11-րդ կետերով նախատեսված տվյալները (տեղեկությունները),

- 2) հաշվետու ժամանակաշրջանում ստացված բողոքների ընդհանուր քանակը,
- 3) հաշվետու ժամանակաշրջանում վերադարձված բողոքների ընդհանուր քանակը,
- 4) միջանկյալ դատական ակտերի դեմ բերված բողոքներով գործերն՝ ըստ ակտերի տեսակների եւ ըստ բողոքարկվող ակտը կայացրած դատարանների:

11. Վճռաբեկ դատարանի վերաբերյալ՝ յուրաքանչյուր պալատի մասով, հրապարակվում են սույն հոդվածի 9-րդ մասով, բացառությամբ 9-րդ մասի 4-րդ-6-րդ, 8-րդ, 9-րդ կետերով նախատեսված տեղեկությունների, ինչպես նաեւ սույն հոդվածի 10-րդ մասի 2-րդ-4-րդ կետերով նախատեսված տեղեկությունները: Սույն հոդվածի 9-րդ մասի 7-րդ կետով նախատեսված տեղեկությունները հաշվարկվում են ըստ օրերի:

12. Ղատական դեպարտամենտի կողմից տարեկան՝ ոչ ուշ, քան մինչեւ հաջորդ տարվա հունվարի 31-ը, հրապարակվում են նաեւ հետեւյալ տվյալները (տեղեկությունները).

1) դատարանների բյուջեն, այդ թվում՝ ֆինանսական ծախսերի համեմատականը նախորդ հաշվետու ժամանակաշրջանի հետ՝ ըստ դատարանների, դատավորների միջին աշխատավարձը եւ դրա համեմատականը նախորդ հաշվետու ժամանակաշրջանի հետ,

2) վճարված պետական տուրքի ընդհանուր չափը,

3) դատավորների կարգապահական պատասխանատվության մասով՝ հարուցված կարգապահական վարույթների քանակը՝ ըստ վարույթ հարուցած սուբյեկտների եւ վարույթի հարուցման հիմքերի, Արդարադատության խորհրդի կողմից կարճված վարույթներով գործերի քանակը՝ ըստ վարույթ հարուցած սուբյեկտների, նշանակված կարգապահական տույժերի տեսակները, կարգապահական պատասխանատվության կրկնակիության դեպքերի ընդհանուր քանակը.

4) սույն հոդվածի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ մասերով նախատեսված տվյալների համեմատականը նախորդ տարվա տվյալների հետ:

**Հոդված 3.** Օրենսգրքում լրացնել 2.1 գլուխ հետեւյալ բովանդակությամբ՝

«2.1. Ղատարաններում գործերի բաշխումը.

Հոդված 21.2. Առաջին ատյանի դատարանում գործերի բաշխման կարգը

1. Ղատարան մուտքագրված քրեական, քաղաքացիական եւ վարչական գործերն անհապաղ մուտք են արվում համակարգչային ծրագիր եւ նույն օրը՝ ժամը 20:00-ին, հավասարաչափ բաշխվում են տվյալ դատարանի համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորների միջեւ՝ պատահական ընտրությամբ եւ հաշվի չառնելով գործերի մուտքագրման հերթականությունը:

2. Եթե գործերը հավասարաչափ բաշխել հնարավոր չէ, ապա գործերը բաշխվում են այն հաշվով, որպեսզի համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորներից յուրաքանչյուրին հանձնված գործերի միջեւ տարբերությունը չզերազանցի մեկը: Տվյալ դեպքում հաջորդ օրը գործեր բաշխելիս առաջին հերթին մեկական գործ պատահական ընտրությամբ հանձնվում է այն դատավորներին, ովքեր նախորդ օրվա բաշխման արդյունքում ստացել են ավելի պակաս թվով գործեր, իսկ մնացած գործերը բաշխվում են ընդհանուր կարգով՝ բոլոր դատավորների միջեւ:

3. Գործերի հանձնումը դատարանների նախագահներին, Արդարադատության խորհրդի կամ Ղատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի կամ ուսումնական հարցերի

հանձնաժողովի անդամ հանդիսացող դատավորներին կատարվում է ընդհանուր կարգով, սակայն յուրաքանչյուր ամիս նրանց հանձնված գործերի քանակը պետք է մինչև քսանհինգ տոկոսով պակաս լինի տվյալ դատարանի համապատասխան մասնագիտացումն ունեցող մեկ դատավորին նախորդ 6 ամսվա ընթացքում հանձնված գործերի ամսական միջին քանակից:

4. Դատարանների նախագահների խորհուրդը սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված տոկոսային միջակայքի շրջանակներում որոշում է դատարանների նախագահներին՝ ըստ դատարանների, Արդարադատության խորհրդի կամ Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի կամ ուսումնական հարցերի հանձնաժողովի անդամ հանդիսացող դատավորներին հանձնվող գործերի կոնկրետ տոկոսաչափերը:

5. Դատարանների նախագահների խորհուրդը բացառիկ դեպքերում, հաշվի առնելով որեւէ դատարանում դատարանի նախագահի, Արդարադատության խորհրդի կամ Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի կամ ուսումնական հարցերի հանձնաժողովի անդամ հանդիսացող դատավորի ծանրաբեռնվածությունը, կարող է սահմանել սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված առավելագույն տոկոսաչափը (*քսանհինգ տոկոսը*) գերազանցող տոկոսաչափեր:

6. Դատավորի վարույթում առանձնակի բարդության գործի (գործերի) առկայության դեպքում դատավորը կարող է դիմել Դատարանների նախագահների խորհրդին՝ առաջարկելով իր անուն-ազգանունը ժամանակավորապես հանել բաշխման ցանկից կամ սահմանել իրեն բաշխվելիք գործերի առանձին տոկոսաչափ: Այդ դեպքում Դատարանների նախագահների խորհուրդը կարող է որոշում կայացնել դատավորի անուն-ազգանունը ժամանակավորապես հանել բաշխման ցանկից կամ նախատեսել նրան բաշխվելիք գործերի առանձին տոկոսաչափ՝ դրա համար սահմանելով կոնկրետ ժամանակահատված, որը չի կարող գերազանցել 6 ամիսը, իսկ բացառիկ դեպքերում՝ 1 տարին:

7. Եթե դատավորը գտնվում է արձակուրդի մեջ (ներառյալ արձակուրդին նախորդող 20-օրյա ժամանակահատվածը) կամ գործուղվել է (ներառյալ գործուղմանը նախորդող 20-օրյա ժամանակահատվածը և *գործուղման ժամկետի ավարտին նախորդող 30-օրյա ժամանակահատվածը*) կամ բացակայում է ժամանակավոր անաշխատունակության հետեւանքով կամ նրա լիազորությունները կասեցվել են *կամ նրա պաշտոնավարման տարիքի ավարտին մնացել է 3 ամիս*, ապա այդ դատավորի անուն-ազգանունը համապատասխան ժամկետով պետք է հանվի բաշխման ցանկից՝ նշելով իրավական հիմքը եւ ժամկետը:

8. Նոր դատավոր նշանակվելու դեպքում այդ դատավորին գործերի բաշխումը կատարվում է ընդհանուր կարգով:

9. Եթե ընդհանուր իրավասության դատարանն ունի նստավայրեր, որոնցում գործում են նույն մասնագիտացումն ունեցող առնվազն երկու դատավորներ, ապա այդ դատարանի նախագահը՝ համաձայն օրենքով սահմանված ընդդատության կանոնների, որոշում է այն նստավայրը, որտեղ պետք է քննվի տվյալ գործը, իսկ գործերի բաշխումը այդ նստավայրում գործող դատավորների միջև կատարվում է սույն հոդվածով սահմանված ընդհանուր կարգով:

10. Եթե դատարանի նստավայրում առկա է միայն մեկ դատավոր եւ օրենքով սահմանված ընդդատության կանոնների համաձայն՝ դատարանի նախագահը որոշել է, որ գործը պետք է քննվի տվյալ

նստավայրում, ապա սույն հոդվածով նախատեսված գործերի բաշխման կարգը տվյալ նստավայրում չի կիրառվում, իսկ գործը հանձնվում է այդ դատավորին:

11. Այն դեպքում, եթե մուտքագրված գործը, համաձայն օրենքի, ենթակա է քննության դատավորների կոլեգիալ կազմով, ապա տվյալ գործը սույն հոդվածով սահմանված կարգով հանձնվում է դատական կազմը նախագահող դատավորին, իսկ դատական կազմի այլ դատավորները որոշվում են սույն հոդվածով սահմանված կարգով:

12. Առանձին տեսակի գործերի բաշխման առանձնահատկությունները սահմանում է Ղատարանների նախագահների խորհուրդը՝ հիմք ընդունելով սույն հոդվածով ամրագրված պատահական բաշխման սկզբունքը՝ այնքանով, որքանով այն իր էությամբ (*mutatis mutandis*) կիրառելի է այդ առանձնահատկությունների սահմանման նկատմամբ:

13. Գործն ըստ էության լուծող որոշումներ չպահանջող գործերի բաշխման կարգը սահմանում է Ղատարանների նախագահների խորհուրդը:

Հոդված 21.3. Վերաքննիչ դատարանում գործերի բաշխման կարգը

1. Վերաքննիչ դատարան մուտքագրված գործերը դատավորներին (գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ բերված բողոքների դեպքում՝ նախագահող դատավորներին) հանձնվում են սույն օրենսգրքի 21.2-րդ հոդվածի 1-ից-8-րդ և 12-րդ մասերով սահմանված կարգով:

2. Գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ բերված բողոքներով գործերը և գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ բերված բողոքներով գործերը համակարգչային ծրագիր են մուտքագրվում և բաշխվում միմյանցից առանձին:

3. Գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ բերված բողոքներով գործերը կոլեգիալ կազմով քննելու համար վերաքննիչ դատարանում ձեւավորվում են երեքական դատավորներից բաղկացած դատական կազմեր:

4. Վերաքննիչ դատարանների նախագահները սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով ձեւավորվող դատական կազմերի մեջ չեն ընդգրկվում, նրանց հանձնվում են միայն գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ բերված բողոքներով գործեր՝ սույն օրենսգրքի 21.2-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 6-րդ մասերով սահմանված կարգով, իսկ գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ բերված բողոքների դեպքում նրանք փոխարինում են դատական կազմի բացակայող դատավորներին՝ Ղատարանների նախագահների խորհրդի կողմից սահմանված դեպքերում և կարգով:

5. Դատական կազմը նախագահում է տվյալ կազմի այն անդամը, որին սույն հոդվածով սահմանված կարգով հանձնվել է կոնկրետ գործը:

6. Յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ին սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով ձեւավորված դատական կազմերից մեկական անդամներ հաջորդաբար՝ պատահական ընտրությամբ մեկ դատական կազմից տեղափոխվում են մեկ այլ դատական կազմ:

Հոդված 21.4. Վճռաբեկ դատարանում գործերի բաշխման կարգը

1. Վճռաբեկ դատարանի պալատի կողմից բողոքը վարույթ ընդունելու վերաբերյալ որոշում կայացվելու դեպքում այդ գործը նույն օրը մուտքագրվում է համակարգիչ և տվյալ պալատի

դատավորների միջեւ բաշխվում սույն օրենսգրքի 21.2-րդ հոդվածի 1-ից-8-րդ եւ 12-րդ մասերով սահմանված կարգով: Բաշխման արդյունքում որոշվում է տվյալ գործով զեկուցող դատավորը:

2. Վճռաբեկ դատարանի նախագահին եւ պալատների նախագահներին գործ չի հանձնվում եւ նրանց անուն-ազգանունը չի ներառվում բաշխման ցանկում, բացառությամբ այն դեպքերի, եթե վճռաբեկ դատարանի կամ վճռաբեկ դատարանի պալատի նախագահն այդ մասին գրավոր դիմում է Դատարանների նախագահների խորհրդին: Այդ դեպքում Դատարանների նախագահների խորհուրդը որոշում է կայացնում վճռաբեկ դատարանի կամ վճռաբեկ դատարանի պալատի նախագահի անուն-ազգանունը բաշխման ցանկում ներառելու մասին՝ սահմանելով նաեւ սույն օրենսգրքի 21.2-րդ հոդվածի 4-րդ կամ 5-րդ մասերով նախատեսված տոկոսաչափը:

**Հոդված 21.5. Գործերի վերաբաշխման կարգը**

1. Եթե դատավորը գործուղվել է կամ նրա գործուղման ժամկետն ավարտվել է կամ եթե նա տեղափոխվել է այլ դատարան կամ տվյալ գործով հայտնել է ինքնաբացարկ կամ նախկինում մասնակցել է տվյալ գործի քննությանը կամ նրա լիազորությունները կասեցվել, դադարել կամ դադարեցվել են, ապա տվյալ դատավորին հանձնված գործերը համակարգչային ծրագրի միջոցով պատահական ընտրությամբ հնարավորինս հավասարաչափ վերաբաշխվում են տվյալ դատարանի համապատասխան մասնագիտացում ունեցող այլ դատավորների միջեւ:

2. Դատավորի ժամանակավոր անաշխատունակության հետեւանքով բացակայելու դեպքում նրան հանձնված գործերի վերաբաշխման կարգը սահմանում է Դատարանների նախագահների խորհուրդը:

**Հոդված 21.6. Դատարաններում գործերի բաշխման համակարգչային ապահովումը**

1. Դատավորների միջեւ գործերի բաշխումը եւ սույն օրենսգրքի 21.3-րդ հոդվածով սահմանված դեպքերում կոլեգիալ դատական կազմերի ձեւավորումը կատարվում է հատուկ համակարգչային ծրագրի միջոցով:

2. Համակարգչային ծրագիրը գործարկելիս ապահովվում է տվյալների գաղտնիությունը՝ բացառելով հնարավոր արտաքին միջամտությունը:

3. Եթե անհաղթահարելի ուժի հետեւանքով գործերի բաշխումը հնարավոր չէ իրականացնել համակարգչային եղանակով, ապա գործերն՝ ըստ դատավորների ազգանունների այբբենական հերթականության դատավորների միջեւ հավասարաչափ բաշխում է դատարանի նախագահը՝ դրանք մուտքագրվելուց հետո՝ անհապաղ: Այդ դեպքում դատարանի նախագահն անհապաղ այդ մասին գրավոր տեղեկացնում է վճռաբեկ դատարանի նախագահին եւ Դատարանների նախագահների խորհրդին:

4. Դատավորների միջեւ համակարգչային ծրագրի միջոցով իրականացվող գործերի բաշխման գործընթացին ապօրինի միջամտելն առաջացնում է քրեական պատասխանատվություն:»:

**Հոդված 4.** Օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 5.** Օրենսգրքի 50-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 50. Վճռաբեկ դատարանի գործունեության նպատակը եւ իրավասությունը

1. Վճռաբեկ դատարանի գործունեության նպատակն է ապահովել օրենքի միատեսակ կիրառությունը: Իր այդ առաքելությունն իրականացնելիս վճռաբեկ դատարանը պետք է ձգտի նպաստել իրավունքի զարգացմանը:

2. Վճռաբեկ դատարանն օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով վճռաբեկ բողոքի հիման վրա վերանայում է վերաքննիչ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված դատական ակտերը, ինչպես նաեւ վերաքննիչ դատարանի՝ օրենքով նախատեսված դեպքերում բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերը:

3. Վճռաբեկ դատարանը դատական ակտը վերանայում է միայն վճռաբեկ բողոքի հիմքերի եւ հիմնավորումների սահմաններում:

4. Վճռաբեկ դատարանի դատական տարածքը Հայաստանի Հանրապետության տարածքն է:»:

**Հոդված 6.** Օրենսգիրքը լրացնելի հետեւյալ բովանդակությամբ 50.1-րդ հոդվածով.

«Հոդված 50.1 Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը

1. Վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե վճռաբեկ դատարանը հանգում է այն հետեւության, որ՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ

2) առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, կամ

3) առկա է նոր կամ նոր երեւան եկած հանգամանք:

2. Սույն հոդվածի իմաստով՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, մասնավորապես, եթե՝

1) տարբեր գործերով ստորադաս դատարանների առնվազն երկու դատական ակտերում միեւնույն նորմը կիրառվել է հակասական մեկնաբանությամբ.

2) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասում բացահայտված՝ տվյալ նորմի սահմանադրաիրավական բովանդակությանը.

3) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը.

4) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը.

5) վճռաբեկ դատարանը համարում է, որ բողոքարկվող դատական ակտի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի իմաստով դատական սխալը յուրաքանչյուր դատավարության համար սահմանվում է համապատասխան դատավարական օրենսգրքով:

4. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված: Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման մեջ վճռաբեկ դատարանը պետք է հիմնավորի վճռաբեկ բողոքում վկայակոչված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կետերով նախատեսված յուրաքանչյուր հիմքի բացակայությունը:

5. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունվելու դեպքում վճռաբեկ դատարանի վերջնական դատական ակտի պատճառաբանական մասը պետք է պարունակի տվյալ գործով սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից առնվազն մեկի առկայության հիմնավորումը:»:

**Հոդված 7.** Օրենսգրքի 64-րդ հոդվածում «Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի (այսուհետ՝ Դատական դեպարտամենտ)» բառերը փոխարինել «Դատական դեպարտամենտի» բառերով:

**Հոդված 8.** Օրենսգրքի 68-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-րդ մաս.

«1.1. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու դեպքում վճռաբեկ բողոքը (*գրավոր ներկայացված տարբերակը*) պարտադիր հրապարակվում է Հայաստանի Հանրապետության դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում, բացառությամբ այն դեպքերի, երբ վճռաբեկ դատարանը որոշում է կայացրել գործի քննությունը դնելիս անցկացնելու մասին:»:

**Հոդված 9.** Օրենսգրքի 72-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ

«Հոդված 72. Դատարանների նախագահների խորհուրդը

1. Դատարանների նախագահների խորհուրդը դատական իշխանության մշտապես գործող ինքնակառավարման մարմին է:

2. Դատարանների նախագահների խորհրդի անդամներն են առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահները, վճռաբեկ դատարանի և նրա պալատների նախագահները: Խորհրդի անդամի բացակայության դեպքում նրա լիազորություններն իրականացնում է նրան դատարանի կամ պալատի նախագահի պաշտոնում փոխարինող անձը:

3. Դատարանների նախագահների խորհուրդը՝

1) մշակում է դատարանների գործունեության բարելավմանն ուղղված միջոցառումներ եւ առաջարկություններ, նման առաջարկություններ է ներկայացնում իրավասու պետական մարմիններին.

2) քննարկում է դատարանների եւ դատավորի անկախության հետ կապված կամ այն վտանգող ցանկացած հարց եւ առաջարկություններ է ներկայացնում իրավասու մարմիններին դրանց *լուծման* վերաբերյալ.

3) իրավասու պետական մարմիններին առաջարկություններ է ներկայացնում օրենքների եւ այլ իրավական ակտերի կատարելագործման վերաբերյալ.

4) հաստատում է դատարանների գործավարության կանոնները.

5) կայացնում է Դատական դեպարտամենտի համար պարտադիր կատարման ենթակա որոշումներ.

6) հաստատում է դատավորի պատմուճանի նկարագրությունը, դատավորի աշխատասենյակի տիպային կահավորման ցանկը.

7) հաստատում է դատավորների վերապատրաստման կարգը.

8) մշակում եւ հաստատում է զանգվածային լրատվության միջոցների հետ դատարանների համագործակցության կանոնները.

9) սահմանում է դատարանների՝ օրենքով չսահմանված նստավայրերը եւ հաստատում է դատավորների՝ ըստ նստավայրերի բաշխման կարգը.



10) մշակում եւ հաստատում է դատավորների եւ դատարանների նախագահների գործուղման, արձակուրդի կամ հիվանդության դեպքերում նրանց փոխարինելու կարգը.

11) Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի կամ որեւէ դատավորի դիմումի հիման վրա կարող է տալ դատական պրակտիկայում առաջացող իրավական հարցերի վերաբերյալ խորհրդատվական բնույթի պարզաբանումներ.

12) հաստատում է դատական ծառայության պաշտոնների անձնագրերը.

13) հաստատում է դատական ծառայության պաշտոնների անվանացանկը եւ հաստիքների քանակը՝ ըստ կառուցվածքային եւ առանձնացված ստորաբաժանումների.

14) սահմանում է դատական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար փակ մրցույթի անցկացման կարգը, ինչպես նաեւ բաց մրցույթում թեստավորման, հարցազրույցի անցկացման եւ թեկնածուների հատկանիշների գնահատման կարգը, մրցութային հանձնաժողովների ձեւավորման կարգը եւ դրանց աշխատակարգը.

15) սահմանում է դատական ծառայողի գործունեության գնահատման կարգը, չափանիշները եւ բնութագրի ձեւը.

16) հաստատում է դատական ծառայողների վերապատրաստում անցկացնելու կարգը.

17) հաստատում է Ղատական դեպարտամենտի կողմից նախապատրաստված բյուջետային հայտը.

18) դատարանների կողմից ներկայացված հայտերի հիման վրա մշակում է միջնաժամկետ ծախսերի ծրագիրը.

19) բաշխում է դատարանների պահուստային ֆոնդի միջոցները.

20) վճարեկ դատարանի նախագահի ներկայացմամբ նշանակում եւ հետ է կանչում Ղատական դեպարտամենտի ղեկավարին.

21) Ղատական դեպարտամենտի ղեկավարի ներկայացմամբ հաստատում եւ փոփոխում է դատական կարգադրիչների ծառայության կառուցվածքը եւ առանձնացված ստորաբաժանումների ցանկը.

22) Ղատական դեպարտամենտի ղեկավարի ներկայացմամբ՝ պետական բյուջեի հատկացումների սահմաններում հաստատում է դատական կարգադրիչների հաստիքների թիվը՝ ըստ առանձնացված ստորաբաժանումների, ինչպես նաեւ դատական կարգադրիչների ծառայության պաշտոնների անվանացանկը.

23) Ղատական դեպարտամենտի ղեկավարի ներկայացմամբ սահմանում է դատական կարգադրիչներին որպես խրախուսանք շնորհվող կրծքանշանների տեսակները եւ ձեւերը.

24) Ղատական դեպարտամենտի ղեկավարի ներկայացմամբ սահմանում է դատական կարգադրիչներին համազգեստ հատկացնելու եւ կրելու կարգը.

25) իրականացնում է օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

4. Ղատարանների նախագահների խորհրդի հերթական նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ: Ղատարանների նախագահների խորհրդի

արտահերթ նիստ գումարվում է խորհրդի անդամների առնվազն մեկ երրորդի պահանջով՝ նրանց սահմանած օրակարգով:

5. Դատարանների նախագահների խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Խորհրդի անդամն իրավունք չունի ձեռնպահ մնալ որեւէ հարցի վերաբերյալ քվեարկելուց:

6. Դատարանների նախագահների խորհրդի նիստերին կարող են հրավիրվել խորհրդի անդամ չհանդիսացող դատավորներ, ինչպես նաեւ այլ անձինք:

7. Դատարանների նախագահների խորհուրդն ապահովում է նիստերի ողջ ընթացքի տեսաձայնագրությունը, *իսկ ըստ անհրաժեշտության նաև* ուղիղ հեռարձակումը նիստերի դահլիճից դուրս՝ հանրության համար մատչելի տարածքում:

8. Դատարանների նախագահների խորհուրդը գործում է իր հաստատած կանոնակարգին համապատասխան:

9. Դատարանների նախագահների խորհուրդն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով եւ «Հայաստանի Հանրապետության Դատարանների նախագահների խորհուրդ» գրառմամբ կնիք:

**Հոդված 10.** Օրենսգրքի 74-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 74. Դատավորների ընդհանուր ժողովի հանձնաժողովները

1. Դատավորների ընդհանուր ժողովն իր կազմից ձեւավորում է էթիկայի եւ կարգապահական հարցերի, ինչպես նաեւ ուսումնական հարցերի հանձնաժողովները:

2. Հանձնաժողովներն իրականացնում են սույն օրենսգրքով իրենց վերապահված լիազորությունները:

3. Էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովի կազմում ընդգրկվում է 7 անդամ, որոնցից երկուսը՝ Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների դատավորներից, երկուսը՝ ՀՀ մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների դատավորներից, իսկ երեքը՝ վերաքննիչ դատարանների դատավորներից: Դատարանների նախագահները *և Արդարադատության խորհրդի անդամները* չեն կարող ընդգրկվել էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովի կազմում:

4. Ուսումնական հարցերի հանձնաժողովի կազմում ընդգրկվում է 5 անդամ, որոնցից մեկը՝ վճռաբեկ դատարանից, մեկը՝ վերաքննիչ դատարաններից, երեքը՝ առաջին ատյանի դատարաններից:

5. Դատավորների ընդհանուր ժողովի անդամը կարող է առաջադրվել որպես հանձնաժողովի անդամ ինքնաառաջադրման կամ դատավորների ընդհանուր ժողովի որեւէ այլ անդամի կողմից առաջադրվելու եղանակով:

6. Հանձնաժողովների անդամներն ընտրվում են դատավորների ընդհանուր ժողովի անդամների կողմից՝ գաղտնի քվեարկությամբ՝ 4 տարի ժամկետով:

7. Քվեարկությունն անցկացվում է առանձին քվեաթերթիկներով՝ ըստ սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված՝ դատարանների բաժանման: Քվեաթերթիկում ներառվում են համապատասխան դատարանի (դատարանների) բոլոր այն դատավորների անունները, որոնք առաջադրվել են սույն

հողվածի 5-րդ մասով սահմանված կարգով: Քվեաթերթիկում յուրաքանչյուր թեկնածուի անուն-ազգանունից հետո գրվում են «կողմ եմ» բառերը՝ նշումի համար նախատեսված դատարկ քառակույտով: Քվեարկելիս դատավորն ունի մեկ ձայնի իրավունք: Ընտրված են համարվում առավել շատ ձայներ ստացած թեկնածուները: Ձայների հավասարության դեպքում ընտրված է համարվում այն թեկնածուն, որն ունի դատավորի պաշտոնում պաշտոնավարման ավելի երկար ստաժ, իսկ ստաժի հավասարության դեպքում՝ այն թեկնածուն, որն ունի ավելի երկար մասնագիտական աշխատանքային ստաժ:

8. Դատավորների ընդհանուր ժողովի հանձնաժողովների անդամների թեկնածուներին գրանցելու, ինչպես նաև քվեարկությունը կազմակերպելու, քվեարկողների ձայները հաշվելու եւ քվեարկությունների արդյունքներն ամփոփելու նպատակով դատավորների ընդհանուր ժողովը կազմավորում է հաշվիչ հանձնաժողով՝ կազմված 5 անդամներից, որոնք ընտրվում են դատավորների ընդհանուր ժողովի կողմից՝ բաց քվեարկությամբ: Դատավորները կարող են առաջադրվել որպես հաշվիչ հանձնաժողովի անդամ ինքնաառաջադրման կամ դատավորների ընդհանուր ժողովի որեւէ այլ մասնակցի կողմից առաջադրվելու եղանակով: Հաշվիչ հանձնաժողովի գործունեության կարգը սահմանվում է դատավորների ընդհանուր ժողովի կանոնակարգով:

9. Յուրաքանչյուր հանձնաժողով իր կազմից՝ հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ ընտրում է հանձնաժողովի նախագահ, որը ղեկավարում է հանձնաժողովի ընթացիկ գործունեությունը:

**Հոդված 11.** Օրենսգրքի 96-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Դատավորը պարտավոր է օրենքով սահմանված կարգով ներկայացվող հայտարարագրի պատճենը ուղարկել Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովին:»:

**Հոդված 12.** Օրենսգրքի 98-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-րդ մաս.

«1.1 Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել կամ նշանակվել Արդարադատության խորհրդի անդամ:»:

2) 2-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Արդարադատության խորհրդի իրավաբան գիտնական անդամ կարող է նշանակվել այն անձը, ով ունի գիտաուսումնական կազմակերպություններում վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն 3 տարվա աշխատանքի փորձ:»:

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մաս.

«3. Արդարադատության խորհրդի իրավաբան գիտնական անդամներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով սահմանված համապատասխան միջոցների հաշվին Դատական դեպարտամենտի կողմից վճարվում է ամսական հատուցում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով:»:

**Հոդված 13.** Օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «երկու անդամ» բառերից հետո լրացնել «՝ համապատասխանաբար քրեական և քաղաքացիական մասնագիտացմամբ դատավորներից» բառերով:

**Հոդված 14.** Ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 104-րդ հոդվածի 3-րդ մասը եւ 106-րդ հոդվածը:

**Հոդված 15.** Օրենսգրքի 107-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Արդարադատության խորհրդի նիստն իրավագոր է, եթե նիստին մասնակցում է խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդը:»:

**Հոդված 16. Օրենսգրքի 111-րդ հոդվածում՝**

1) 5-րդ մասի 1-ին նախադասությունում «համաձայնություն տալու վերաբերյալ» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև դատավորների թեկնածությունների և դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակները կազմելու հետ կապված» բառերով.

2) 5-րդ մասի վերջում լրացնել նոր նախադասություններ՝ հետևյալ բովանդակությամբ.

« Արդարադատության խորհրդի անդամը կարող է ներկայացնել հատուկ կարծիք Արդարադատության խորհրդում ընդունված ցանկացած որոշման վերաբերյալ: Եթե Արդարադատության խորհրդի անդամը որոշման վերաբերյալ ունի հատուկ կարծիք, այդ մասին նշում է արվում Արդարադատության խորհրդի որոշման մեջ և հատուկ կարծիքը կցվում է որոշմանը:»:

**Հոդված 17.** Օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Դատական դեպարտամենտին հանձնարարություններ տալու իրավունք ունի Արդարադատության խորհուրդը՝ աշխատակարգային որոշումներ ընդունելու միջոցով, խորհրդի այն անդամը, որին խորհրդի որոշմամբ տրվել են հանձնարարություններ, Դատարանների նախագահների խորհրդի կանոնակարգով սահմանված կարգով՝ Դատարանների նախագահների խորհուրդը, իսկ Դատավորների ընդհանուր ժողովի կանոնակարգով սահմանված կարգով՝ Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովը, Դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողովը:»:

**Հոդված 18. Օրենսգրքի 115-րդ հոդվածում՝**

1) 1-ին մասում «2-ով» բառը փոխարինել «4-ով» բառով, իսկ «1-ով» բառը փոխարինել «2-ով» բառով:

2) 3-րդ մասում «անցողիկ միավորը» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև Արդարադատության խորհուրդ ներկայացված հավակնորդների վերաբերյալ սույն օրենսգրքի 116-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան հարցումների իրականացման կարգը, հարցման

շրջանակում ընդգրկված մարմինների ցանկը և հարցման նպատակով կիրառվող գրավոր հարցաթերթիկների ձևը».

3) 3.1-րդ մասի 1-ին նախադասությունում «Քննական հարցերի» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև սույն օրենսգրքի 115.2-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հոգեբանական թեստի» բառերը.

4) 4-րդ մասում «22» թիվը փոխարինել «28» թվով, իսկ «իրավունքից» բառից հետո լրացնել «, ունեն առնվազն 3 տարվա մասնագիտական ստաժ» բառերը:

**Հոդված 19.** Օրենսգրքի 115.1-րդ հոդվածի 4-րդ մասում «115.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով» բառերը փոխարինել « 115.2-րդ հոդվածով» բառերով:

**Հոդված 20.** Օրենսգրքի 115.2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 115.2. Որակավորման գրավոր քննությունը**

1. Որակավորման գրավոր քննությունն անցկացվում է համապատասխանաբար քրեական, քաղաքացիական կամ վարչական մասնագիտացման ոլորտում թեստերի միջոցով, որոնք պարունակում են իրավական խնդիրներ՝ առաջադրված փաստական հանգամանքների նկատմամբ իրավունքի նորմերը վերլուծելու և կիրառելու պահանջով:

2. Իրավական խնդրում ներկայացված յուրաքանչյուր հանգամանք վեր հանելու, վերլուծելու և իրավական որակում տալու համար տրվում է համապատասխան միավոր՝ կախված հանգամանքների բարդությունից:

3. Սույն հոդվածով նախատեսված գրավոր քննության ժամանակ հավակնորդին կարող են տրամադրվել հանձնարարվող խնդիրների փաստական հանգամանքների վերաբերյալ նյութեր, ինչպես նաև խնդրի լուծման համար անհրաժեշտ տեսական գրականություն և իրավական ակտեր, որոնց շրջանակը որոշում է սույն օրենսգրքի 115-րդ հոդվածի 3.1-րդ մասով սահմանված կարգով ընտրված համապատասխան մասնագետը (մասնագետները) կամ մասնագիտացված կազմակերպությունը:

4. Թեստերը կարող են պարունակել նաև բազմակի ընտրության հարցեր:

5. Սույն հոդվածով նախատեսված թեստն ուղղված է, բացի ակադեմիական գիտելիքներից, նաև հավակնորդի վերլուծական կարողությունների, բարդ տեքստերի համակարգված, արագ ըմբռնման կարողությունների ստուգմանը:

6. Թեստի ժամանակ հարցերն ընտրվում են պատահականության սկզբունքով: Թեստի անցկացման համար նախատեսված հարցերի ընդհանուր քանակը, որից կատարվում է հարցերի ընտրությունը, պետք է առնվազն կրկնակի գերազանցի մեկ թեստի համար նախատեսված հարցերի քանակը:

7. Արդարադատության խորհուրդը սահմանում է սույն հոդվածով նախատեսված թեստի անցկացման համար մշակման ենթակա տարբերակների նվազագույն քանակը:

8. Որակավորման գրավոր քննության օրվանից առնվազն 10 օր առաջ Արդարադատության խորհրդի աշխատակազմը հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է սույն հոդվածով նախատեսված որակավորման գրավոր քննության առաջադրանքների առնվազն մեկ նմուշօրինակ:

9. Սույն հոդվածով նախատեսված որակավորման գրավոր քննության արդյունքներով անցողիկ միավորներ հավաքած հավակնորդները անցնում են հոգեբանական թեստ՝ ուղղված պատասխանատվության զգացման, ունկնդրելու կարողության, ինքնատիրապետման, հեղինակության (ազդեցության) չափավոր կիրառման և դատավորի աշխատանքի համար անհրաժեշտ ոչ մասնագիտական այլ հատկանիշների ստուգմանը:

10. Հոգեբանական թեստի արդյունքներն ունեն միայն խորհրդատվական նշանակություն, ենթակա չեն հրապարակման և տրամադրվում են միայն Արդարադատության խորհրդի անդամներին՝ խորհրդում հարցազրույցի անցկացումից հետո մինչև ամփոփիչ քննարկումը: Հոգեբանական թեստի արդյունքները դատավորների թեկնածությունների ցուցակը Հանրապետության Նախագահի կողմից հաստատվելուց հետո ենթակա է ոչնչացման:»:

**Հոդված 21.** Օրենսգրքի 115.3-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «115.2-րդ հոդվածի 1-ին մասով» բառերը փոխարինել «115.2-րդ հոդվածով» բառերով, հանել «յուրաքանչյուր փուլի» և «համապատասխան փուլի» բառերը.

2) 4-րդ մասի 1-ին նախադասությունում «գիտնականի թեկնածություն» բառերից հետո լրացնել «՝ վերջիններիս համաձայնությամբ» բառերը.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-րդ մաս.

«6.1. Գնահատման և բողոքարկման հանձնաժողովների անդամներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով սահմանված համապատասխան միջոցների հաշվին Ղատական դեպարտամենտի կողմից վճարվում է հատուցում՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված չափով:».

4) 12-րդ մասում «հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով» բառերը փոխարինել «հոդվածով» բառերով.

5) 15-րդ մասից հանել «հնարավորինս» բառը.

6) 16-րդ մասում « հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով » բառերը փոխարինել «հոդվածով» բառերով

7) 21-րդ մասում «պատճենը» բառերից հետո լրացնել «՝ սույն հոդվածի 17-րդ մասով նախատեսված նշումներով:»:

8) 29-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«29. Բողոքարկման հանձնաժողովը բողոքները քննում է բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում: Բողոքարկման արդյունքներով կայացված որոշումները պատճառաբանվում են: Դրանք անհապաղ հրապարակվում են դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում՝ նշելով սկզբնական և բողոքարկման արդյունքում ստացված միավորները»:

9) 31-րդ մասում «նոյեմբերի 25-ը» բառերը փոխարինել «նոյեմբերի 15-ը» բառերով:

10) 32-րդ հոդվածում «115.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված գրավոր քննության երկրորդ փուլի» բառերը փոխարինել «115.2-րդ հոդվածով նախատեսված գրավոր քննության» բառերով:

**Հոդված 22.** Օրենսգրքի 116-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում « 115.2-րդ հոդվածի 1-ին մասով» բառերը փոխարինել «115.2-րդ հոդվածով» բառերով:

2) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ նախադասությամբ.

«Պետական մարմինները և պաշտոնատար անձինք նշված տեղեկությունները պարտավոր են տրամադրել նաև Արդարադատության խորհրդի պահանջով:»

3) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Արդարադատության խորհրդի աշխատակազմը Արդարադատության խորհրդի կողմից սահմանված կարգով գրավոր և բանավոր հարցումներ է կատարում հավակնորդի աշխատավայր, բարձրագույն ուսումնական հաստատություններ և հավակնորդի հետ առնչվող այլ հաստատություններ՝ հավակնորդի մասնագիտական որակների և անձնական հատկանիշների վերաբերյալ, ինչպես նաև հարկային և Արդարադատության խորհրդի կողմից սահմանված այլ վարչական մարմիններից օրենքով սահմանված կարգով ստանում է հավակնորդին վերաբերող անհատական տվյալներ: Արդարադատության խորհրդի աշխատակազմը Արդարադատության խորհրդի կողմից սահմանված կարգով իրականացնում է նաև հավակնորդի կողմից ներկայացված փաստաթղթերի հավաստիության ստուգում:»:

4) Լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ մաս՝

«8. Արդարադատության խորհրդում հարցազրույցին մասնակցող անձինք իրավունք ունեն դիմելու և դիմունը ներկայացնելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան Արդարադատության խորհրդում հարցազրույցին նախորդող օրը ծանոթանալու սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված իրենց անձնական գործին:»:

**Հոդված 23.** Օրենսգրքի 117-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասում «հարցաթերթերի և ամփոփիչ քննարկման ժամանակ արտահայտված կարծիքների հիման վրա» բառերը փոխարինել «հարցաթերթերի, ամփոփիչ քննարկման ժամանակ արտահայտված կարծիքների և Արդարադատության խորհրդի անդամների կողմից ներկայացված հատուկ կարծիքների հիման վրա» բառերով:

2) 7-րդ մասը «գեկույցները» բառից հետո լրացնել «՝ Արդարադատության խորհրդի անդամների կողմից ներկայացված հատուկ կարծիքների հետ միասին» բառերը:

3) 8-րդ մասում «՝ իր համար ընդունելի թեկնածություններով» բառերը փոխարինել «կամ այն վերադարձնում է Արդարադատության խորհուրդ՝ պահանջելով նոր քննարկում» բառերով:

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ, 10-րդ և 11-րդ մասերով.

«9. Արդարադատության խորհուրդը Հանրապետության Նախագահի վերադարձած թեկնածությունների ցուցակը ստանալու օրվան հաջորդող տասնհինգօրյա ժամկետում Հանրապետության Նախագահին է ուղարկում փոփոխված ցուցակ կամ կարող է Հանրապետության Նախագահին ներկայացնել անփոփոխ ցուցակ, եթե դրա օգտին են քվեարկում խորհրդի անդամների երկու երրորդը:

10. Հանրապետության Նախագահի կողմից թեկնածությունների ցուցակը վերադարձվելու դեպքում Արդարադատության խորհուրդն իրավունք ունի ըստ անհրաժեշտության կրկին հրավիրել և լսել սույն օրենսգրքի 116.1-րդ հոդվածով սահմանված կարգով խորհրդում հարցազրույցի ներկայացած հավակնորդներին:

11. Հանրապետության Նախագահի կողմից թեկնածությունների ցուցակը վերադարձվելու դեպքում Արդարադատության խորհրդում հարցազրույցի, թեկնածությունների ցուցակի կազմման ու հաստատման վրա տարածվում են սույն օրենսգրքի 116-րդ և 117-րդ հոդվածների դրույթները:»:

**Հոդված 24.** Օրենսգրքի 115-117-րդ հոդվածներում «քննությունների» բառը և դրա համապատասխան հոլովածները փոխարինել «քննության» բառով կամ դրա համապատասխան հոլովածներով, իսկ 118-րդ հոդվածի «սահմանված հիմքով» բառերից հետո լրացնել «կամ որոնց լիազորությունները դադարել են սույն օրենսգրքի 167-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով սահմանված հիմքով» բառերը:

**Հոդված 25.** Օրենսգրքի 154-րդ հոդվածի՝

1) վերնագրում եւ տեքստում «էթիկայի» բառերը փոխարինել «Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի եւ կարգապահական հարցերի» բառերով:

2) 1-ին մասի երրորդ նախադասության «կարգապահական վարույթ հարուցելու միջնորդությամբ դիմում է Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովին» բառերը փոխարինել «հարուցում է կարգապահական վարույթ սույն օրենսգրքի 155-րդ հոդվածով սահմանված կարգով» բառերով:

**Հոդված 26.** Օրենսգրքի 155-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 2-րդ կետում եւ 4-րդ մասում «Արդարադատության խորհրդի կարգապահական» բառերը փոխարինել «Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի եւ կարգապահական հարցերի» բառերով:

2) 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.



«1) վճռաբեկ դատարանի նախագահը՝ էթիկայի եւ կարգապահական կանոնների խախտման հիմքերով.

«2) Ղատավորների ընդհանուր ժողովի էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովը՝ միայն էթիկայի կանոնների խախտման հիմքով:»:

3) 3-րդ մասում «Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը՝ Ղատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովի միջնորդությամբ» բառերը փոխարինել «Ղատավորների ընդհանուր ժողովի էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովը» բառերով:

4) 4-րդ մասում «ստեղծկացնում է արդարադատության նախարարին, իսկ» բառերից հետո լրացնել «էթիկայի կանոնների խախտման հիմքով» բառերը:

5) 5-րդ մասի 4-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 27.** Օրենսգրքի 156-րդ հոդվածի 5-րդ մասում, 159-րդ հոդվածի 1-ին մասում եւ 166.1-րդ հոդվածի 2-րդ մասում «Արդարադատության խորհրդի կարգապահական» բառերը փոխարինել «Ղատավորների ընդհանուր ժողովի էթիկայի եւ կարգապահական հարցերի» բառերով:

**Հոդված 28.** Օրենսգրքի 161-րդ հոդվածի 2-րդ մասի «Եթե կարգապահական վարույթը հարուցվել է Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի կողմից, ապա վարույթ հարուցած կարգապահական հանձնաժողովի անդամները խորհրդակցական սենյակում ներկա չեն գտնվում:» նախադասությունը հանել:

**Հոդված 29.** Օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 3-րդ նախադասությունները հանել:

**Հոդված 30.** Օրենսգրքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասությունում, 78-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում, 153-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետում, 166.1-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերում «էթիկայի», բառերը փոխարինել «էթիկայի եւ կարգապահական հարցերի» բառերով, իսկ 159-րդ հոդվածի 1-ին մասում՝ «կարգապահական հանձնաժողովի հանձնարարությամբ» բառերը փոխարինել «էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովի հանձնարարությամբ» բառերով:

**Հոդված 31.** Օրենսգրքի 11-րդ հոդվածի 4-րդ մասում «Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի (այսուհետ՝ Ղատարանների նախագահների խորհուրդ) էթիկայի հանձնաժողովին» բառերը փոխարինել «Ղատավորների ընդհանուր ժողովի էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովին» բառերով:

**Հոդված 32.** Օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ եւ 4-րդ կետերում, 73-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետում, 76-րդ հոդվածի 5-րդ մասում, 78-րդ հոդվածի 2-րդ մասում, 92-րդ հոդվածի 6-րդ մասում, 95-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերում «դատարանների նախագահների խորհրդի էթիկայի» բառերը համապատասխանաբար փոխարինել «Ղատավորների ընդհանուր ժողովի էթիկայի եւ կարգապահական հարցերի» բառերով:

**Հոդված 33.** Օրենսգրքի 77-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերում «դատարանների նախագահների խորհրդի ուսումնական հարցերով հանձնաժողովին» եւ «դատարանների նախագահների խորհրդի ուսումնական հարցերով հանձնաժողովի» բառերը համապատասխանաբար փոխարինել «դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերով հանձնաժողովին» եւ «դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերով հանձնաժողովի» բառերով:

**Հոդված 34.** Անցումային եւ եզրափակիչ դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովն առանց կարգապահական վարույթ հարուցելու լիազորության շարունակում է իրականացնել իր լիազորությունները մինչեւ իր կողմից հարուցված կարգապահական վարույթներն ավարտելը, բայց ոչ ավելի, քան երեք ամիս ժամկետով: Նշված ժամկետն ավարտվելուց հետո չավարտված կարգապահական վարույթները փոխանցվում են Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովին:

4. Մինչեւ դատարաններում գործերի թվայնացման եւ թվայնացված փաստաթղթերի շրջանառությունն ապահովող համակարգի ներդրումը դատական գործի նյութերը դատավորներին տրամադրվում են թղթային կրիչով, իսկ թվայնացված փաստաթղթերի շրջանառությունն ապահովող համակարգի ներդրումից հետո՝ էլեկտրոնային եղանակով եւ թղթային կրիչով:

5. Սույն օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 21.3-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դատական կազմերն առաջին անգամ ձեւավորվում են պատահական ընտրությամբ՝ համակարգչային ծրագրի միջոցով:

6. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող մեկամսյա ժամկետում ՀՀ կառավարությունը սահմանում է դատական վիճակագրության վարման համար պարտադիր վիճակագրական դասակարգիչները, պարտադիր հրապարակման ենթակա վիճակագրական տվյալների (տեղեկությունների) ցանկը եւ հրապարակման կարգը, վիճակագրական հաշվետվությունների բովանդակության նկարագրությունը:

7. Սույն օրենքի 6-րդ և 8-րդ հոդվածների գործողությունը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո առաջին ատյանի դատարանների կողմից կայացվող դատական ակտերի, դրանց դեմ բերվող վերաքննիչ բողոքների եւ այդ բողոքների քննարկման արդյունքում կայացվող դատական ակտերի, վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ բերվող վճռաբեկ բողոքների եւ այդ բողոքների քննարկման արդյունքում կայացվող դատական ակտերի վրա:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ**

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱԴԵՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հ. Սահակյան	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկում են փոփոխություններ կատարել առկա կարգավորումներում, որոնք ուղղված կլինեն Արդարադատության խորհրդում դատավոր և իրավաբան գիտնական անդամների մասնակցության	Ընդունվել է	Նախագծում կատարվել են առաջարկություններից բխող մի շարք փոփոխություններ, հատկապես՝ <b>Օրենսգրքի 98-րդ հոդվածում</b> ՝ Լրացվել է հետևյալ բովանդակությամբ 1.1 թղմաս.

	<p>հավասարակշռության ապահովմանը, Արդարադատության խորհրդի գործունեության արդյունավետության բարձրացմանը, որակավորման քննությունների ընթացակարգի կատարելագործմանը:</p> <p>Այդ առումով առաջարկում են դատավորի թեկնածուի համար սահմանել 28 տարվա նվազագույն տարիքային ցենզ՝ նկատի ունենալով մի շարք երկրների միջազգային փորձը, որը կապահովի ոչ միայն մասնագիտական փորձառություն, այլ նաև կյանքի համապատասխան փորձ ունեցող անձանց ընդգրկումը դատական իշխանության ոլորտ: Բացի այդ, Դատավորների ընտրության գործընթացը իր բոլոր փուլերով բացարձակապես դատական իշխանության ձեռքում չկենտրոնացնելու նպատակով, այդ գործընթացում դատական իշխանության մասնակցությունը հավասարակշռվի և զսպվի անհրաժեշտ է նախատեսել հանրային վերահսկողություն և քննական հարցաշարերի մշակման գործառույթների տարանջատման:</p> <p>Դատավորների ընտրության գործընթացում զգալի դեր պետք է ունենա նրա արժանիքների, մասնագիտական որակների և նրա մասին այլ կարևոր անհատական տվյալների մասին տեղեկությունների հավաքագրումը և վերլուծությունը: Արդարադատության խորհրդի գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված անհրաժեշտ է նույն անձի՝ երկրորդ անգամ անընդմեջ Արդարադատության խորհրդի անդամ ընտրվելը սահմանափակել՝ երաշխավորելով ռոտացիայի</p>		<p>«1.1 Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել կամ նշանակվել Արդարադատության խորհրդի անդամ:»:</p> <p>1) 2-րդ մասում լրացվել է հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն. «Արդարադատության խորհրդի իրավաբան գիտնական անդամ կարող է նշանակվել այն անձը, ով ունի գիտաուսումնական կազմակերպություններում վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն 3 տարվա աշխատանքի փորձ»:</p> <p>2) Լրացվել է հետևյալ բովանդակությամբ 3.1-րդ մաս. «3.1. Արդարադատության խորհրդի իրավաբան գիտնական անդամներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով սահմանված համապատասխան միջոցների հաշվին Արդարադատության խորհրդի աշխատակազմի կողմից վճարվում է ամսական հատուցում նվազագույն աշխատավարձի հարյուրիսունապատիկի չափով:»:</p> <p><b>Օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին մասում՝</b></p> <p>1) 1-ին կետում «մեկ անդամ» բառերը փոխարինվել է «երկու անդամ՝ համապատասխանաբար քրեական և</p>
--	--	--	---

	<p>սկզբունքը խորհրդի գործունեության կազմակերպման մեջ և կանխելով միևնույն անձանց՝ առանց որևէ սահմանափակման անընդմեջ խորհրդի անդամի պաշտոնը զբաղեցնելու հնարավորությունը, ինչը դրսևորվում է գործանկանում: Արդարադատության խորհրդի գործունեությանն իրավաբան գիտնական անդամների իրական, այլ ոչ թե ձևական մասնակցության ապահովմանն ուղղված Արդարադատության խորհրդի նիստն իրավազոր համարելու համար առնվազն 3 իրավաբան գիտնական անդամների պարտադիր մասնակցության պահանջ նախատեսել: Առաջարկում եմ նաև նախատեսել նաև Արդարադատության խորհրդի անդամի հատուկ կարծիքի ինստիտուտի նախատեսումը:</p>	<p>քաղաքացիական մասնագիտացմամբ դատավորներից» բառերով.</p> <p>2) 2-րդ կետում «երկու անդամ» բառերից հետո լրացվել է «՝ համապատասխանաբար քրեական և քաղաքացիական մասնագիտացմամբ դատավորներից» բառերով.</p> <p>3) 8-րդ կետում «երկու» բառը փոխարինվել է «մեկ» բառով:</p> <p><b>Օրենսգրքի 107-րդ հոդվածի 5-րդ մասը</b> շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«5. Արդարադատության խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդը:»:</p> <p><b>Օրենսգրքի 111-րդ հոդվածում՝</b></p> <p>3) 5-րդ մասի 1-ին նախադասությունում «համաձայնություն տալու վերաբերյալ» բառերից հետո լրացվել է «, ինչպես նաև դատավորների թեկնածությունների և դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակները կազմելու հետ կապված» բառերով.</p> <p>4) «5-րդ մասի վերջում լրացնել նոր նախադասություններ՝ հետևյալ բովանդակությամբ.</p>
--	---	--

			<p>« Արդարադատության խորհրդի անդամը կարող է ներկայացնել հատուկ կարծիք Արդարադատության խորհրդում ընդունված ցանկացած որոշման վերաբերյալ: Եթե Արդարադատության խորհրդի անդամը որոշման վերաբերյալ ունի հատուկ կարծիք, այդ մասին նշում է արվում Արդարադատության խորհրդի որոշման մեջ և հատուկ կարծիքը կցվում է որոշմանը:»:</p> <p><b>Օրենսգրքի 115-րդ հոդվածում՝</b></p> <p>5) 3-րդ մասում «անցողիկ միավորը» բառերից հետո լրացվել է «, ինչպես նաև Արդարադատության խորհուրդ ներկայացված հավակնորդների վերաբերյալ սույն օրենսգրքի 116-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան հարցումների իրականացման կարգը, հարցման շրջանակում ընդգրկված մարմինները ցանկը և հարցման նպատակով կիրառվող գրավոր հարցաթերթիկների ձևը».</p> <p>6) 3.1-րդ մասի 1-ին նախադասությունում «Քննական հարցերի» բառերից հետո լրացվել է «, ինչպես նաև սույն օրենսգրքի 115.2-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հոգեբանական թեստի» բառերը.</p>
--	--	--	---

			<p>7) 4-րդ մասում «22» թիվը փոխարինել «28» թվով, իսկ «իրավունքից» բառից հետո լրացնել «, ունեն առնվազն 3 տարվա մասնագիտական ստաժ» բառերը:</p> <p><b>Օրենսգրքի 115.2-րդ հոդվածը</b> շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.</p> <p><b>«Հոդված 115.2. Որակավորման գրավոր քննությունը</b></p> <p>11. Որակավորման գրավոր քննությունն անցկացվում է համապատասխանաբար քրեական, քաղաքացիական կամ վարչական մասնագիտացման ոլորտում թեստերի միջոցով, որոնք պարունակում են իրավական խնդիրներ՝ առաջադրված փաստական հանգամանքների նկատմամբ իրավունքի նորմերը կիրառելու և վերլուծելու պահանջով:</p> <p>12. Իրավական խնդրում ներկայացված յուրաքանչյուր հանգամանք վեր հանելու, վերլուծելու և իրավական որակում տալու համար տրվում է համապատասխան միավոր՝ կախված հանգամանքների բարդությունից:</p> <p>13. Սույն հոդվածով նախատեսված գրավոր</p>
--	--	--	--

		<p>քննության ժամանակ հավակնորդին կարող են տրամադրվել հանձնարարվող խնդիրների փաստական հանգամանքների վերաբերյալ նյութեր, ինչպես նաև խնդրի լուծման համար անհրաժեշտ տեսական գրականություն և իրավական ակտեր, որոնց շրջանակը որոշում է սույն օրենսգրքի 115.-րդ հոդվածի 3.1-րդ մասով սահմանված կարգով ընտրված համապատասխան մասնագետը (մասնագետները) կամ մասնագիտացված կազմակերպությունը:</p> <p>14. Թեստերը կարող են պարունակել նաև բազմակի ընտրության հարցեր:</p> <p>15. Սույն հոդվածով նախատեսված թեստն ուղղված է, բացի ակադեմիական գիտելիքներից, նաև հավակնորդի վերլուծական կարողությունների, բարդ տեքստերի համակարգված, արագ ըմբռնման կարողությունների ստուգմանը:</p> <p>16. Թեստի ժամանակ հարցերն ընտրվում են պատահականության սկզբունքով: Թեստի անցկացման համար նախատեսված հարցերի ընդհանուր քանակը, որի միջից կատարվում է հարցերի ընտրությունը, պետք է առնվազն կրկնակի գերազանցի մեկ թեստի համար</p>
--	--	---



		<p>նախատեսված հարցերի քանակը:</p> <p>17. Արդարադատության խորհուրդը սահմանում է սույն հոդվածով նախատեսված թեստի անցկացման համար մշակման ենթակա տարբերակների նվազագույն քանակը:</p> <p>18. Որակավորման գրավոր քննության օրվանից առնվազն 10 օր առաջ Արդարադատության խորհրդի աշխատակազմը հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է սույն հոդվածով նախատեսված որակավորման գրավոր քննության առաջադրանքների առնվազն մեկ նմուշօրինակ:</p> <p>19. Սույն հոդվածով նախատեսված որակավորման գրավոր քննության արդյունքներով անցողիկ միավորներ հավաքած հավակնորդները անցնում են հոգեբանական թեստ՝ ուղղված պատասխանատվության զգացման, ունկնդրելու կարողության, ինքնատիրապետման, հեղինակության (ազդեցության) չափավոր կիրառման և դատավորի աշխատանքի համար անհրաժեշտ ոչ մասնագիտական այլ հատկանիշների</p>
--	--	---

		<p>ստուգմանը:</p> <p>20. Հոգեբանական թեստի արդյունքները ունեն միայն խորհրդատվական նշանակություն, ենթակա չեն հրապարակման և տրամադրվում են միայն Արդարադատության խորհրդի անդամներին՝ խորհրդում հարցազրույցի անցկացումից հետո մինչև ամփոփիչ քննարկումը: Հոգեբանական թեստի արդյունքները դատավորների թեկնածությունների ցուցակը Հանրապետության Նախագահի կողմից հաստատվելուց հետո ենթակա են ոչնչացման:»:</p> <p><b>Օրենսգրքի 115.3-րդ հոդվածում՝</b></p> <p>- Լրացվել է հետևյալ բովանդակությամբ 6.1-րդ մաս.</p> <p>«6.1. Չնահատման և բողոքարկման հանձնաժողովների անդամներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով սահմանված համապատասխան միջոցների հաշվին Արդարադատության խորհրդի աշխատակազմի կողմից վճարվում է հատուցում նվազագույն աշխատավարձի ... չափով:»:</p> <p>-29-րդ մասը շարադրվել է հետևյալ</p>
--	--	---

		<p>խմբագրությամբ.</p> <p>«29. Բողոքարկման հանձնաժողովը բողոքները քննում է բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում: Բողոքարկման արդյունքներով կայացված որոշումները պատճառաբանվում են: Դրանք անհապաղ հրապարակվում են դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում՝ նշելով սկզբնական և բողոքարկման արդյունքում ստացված միավորները»:</p> <p><b>Օրենսգրքի 116-րդ հոդվածում՝</b></p> <p>5) 3-րդ մասը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 2-րդ նախադասությամբ.</p> <p>«Պետական մարմինները և պաշտոնատար անձինք նշված տեղեկությունները պարտավոր են տրամադրել նաև Արդարադատության խորհրդի պահանջով:»</p> <p>6) 5-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«5. Արդարադատության խորհրդի աշխատակազմը Արդարադատության խորհրդի կողմից սահմանված կարգով գրավոր և բանավոր հարցումներ է կատարում հավակնորդի աշխատավայրից, բարձրագույն ուսումնական</p>
--	--	---

		<p>հաստատություններից և հավակնորդի հետ առնչվող այլ հաստատություններից՝ հավակնորդի մասնագիտական որակների և անձնական հատկանիշների վերաբերյալ, ինչպես նաև հարկային և Արդարադատության խորհրդի կողմից սահմանված այլ վարչական մարմիններից օրենքով սահմանված կարգով ստանում է հավակնորդին վերաբերող անհատական տվյալներ: Արդարադատության խորհրդի աշխատակազմը Արդարադատության խորհրդի կողմից սահմանված կարգով իրականացնում է նաև հավակնորդի կողմից ներկայացված փաստաթղթերի հավաստիության ստուգում:»:</p> <p>7) Լրացվել է հետևյալ բովանդակությամբ 8-րդ մաս՝</p> <p>«8. Արդարադատության խորհրդում հարցազրույցին մասնակցող անձինք իրավունք ունեն դիմելու և դիմումը ներկայացնելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան Արդարադատության խորհրդում հարցազրույցին նախորդող օրը ծանոթանալու սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված իրենց անձնական գործին:»:</p>
--	--	---

		<p><b>Օրենսգրքի 117-րդ հոդվածում՝</b></p> <p>5) 4-րդ մասում «հարցաթերթերի և ամփոփիչ քննարկման ժամանակ արտահայտված կարծիքների հիման վրա» բառերը փոխարինվել են «հարցաթերթերի, ամփոփիչ քննարկման ժամանակ արտահայտված կարծիքների և Արդարադատության խորհրդի անդամների կողմից ներկայացված հատուկ կարծիքների հիման վրա» բառերով:</p> <p>6) 7-րդ մասը «զեկույցները» բառից հետո լրացվել է «՝ Արդարադատության խորհրդի անդամների կողմից ներկայացված հատուկ կարծիքների հետ միասին» բառերը:</p> <p>7) 8-րդ մասում «՝ իր համար ընդունելի թեկնածություններով» բառերը փոխարինվել են «կամ այն վերադարձնում է Արդարադատության խորհուրդ՝ պահանջելով նոր քննարկում» բառերով:</p> <p>8) Լրացվել են հետևյալ բովանդակությամբ 9-րդ, 10-րդ և 11-րդ մասերով.</p> <p>«9. Արդարադատության խորհուրդը, Հանրապետության Նախագահի վերադարձրած թեկնածությունների ցուցակը ստանալու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում</p>
--	--	---

			<p>Հանրապետության Նախագահին է ուղարկում փոփոխված ցուցակ կամ կարող է Հանրապետության Նախագահին ներկայացնել անփոփոխ ցուցակ, եթե դրա օգտին են քվեարկում Խորհրդի անդամների երկու երրորդը:</p> <p>10. Հանրապետության Նախագահի կողմից թեկնածությունների ցուցակը վերադարձնելու դեպքում Արդարադատության խորհուրդն իրավունք ունի ըստ անհրաժեշտության կրկին հրավիրել և լսել սույն օրենսգրքի 116.1-րդ հոդվածով սահմանված կարգով Խորհրդում հարցազրույցի ներկայացված հավակնորդների:</p> <p>11. Հանրապետության Նախագահի կողմից թեկնածությունների ցուցակը վերադարձնելու դեպքում Արդարադատության խորհրդում հարցազրույցի, թեկնածությունների ցուցակի կազմման ու հաստատման վրա տարածվում են սույն օրենսգրքի 116-րդ և 117-րդ հոդվածների դրույթները:»:</p>
<p>«Ազգային ժողովի պատգամավոր Արծվիկ Մինասյան»</p>	<p>1. Առաջարկվում է նախագծի 15-րդ հոդվածով փոփոխվող 107-րդ հոդվածի 5-րդ մասում լրացնել դրույթ, որի համաձայն՝ Արդարադատության խորհրդի նիստն իրավազոր կլինի, եթե նիստին մասնակցում է խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդը:</p> <p>2. Առաջարկվում է նախագծի 12-րդ հոդվածով օրենսգրքի 98-րդ հոդվածում լրացվող 3.1-րդ կետում</p>	<p>1. Ընդունվել է</p> <p>2. Ընդունվել է</p>	<p>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>

	<p>սահմանել, որ արդարադատության խորհրդի իրավաբան գիտնական անդամներին Արդարադատության խորհրդի աշխատակազմի կողմից վճարվում է ամսական հատուցում նվազագույն աշխատավարձի հարյուրիսուննապատիկի չափով:</p> <p>3. Նախագծի 12-րդ հոդվածից պարզ չէ, թե նույն անձի կողմից ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվելու արգելքը տարածվում է արդյոք Արդարադատության խորհրդի իրավաբան գիտնական անդամների վրա: Առաջարկվում է հոդվածը խմբագրել այնպես, որ նշված արգելքը տարածվի և Արդարադատության խորհրդի դատավոր անդամների և իրավաբան գիտնական անդամների վրա:</p> <p>4. Առաջարկվում է նախագծի 17-րդ հոդվածում հստակեցնել աշխատակարգային որոշումների հետ կապված հարաբերությունները, մասնավորապես ինչ բնույթի կարող են լինել այդ որոշումները:</p>	<p>Ընդունվել է</p> <p>4. Զի ընդունվել</p>	<p>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>3. Զնայած այն հանգամանքին, որ դատական օրենսգրքի 103-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ Արդարադատության խորհրդի` Հանրապետության Նախագահի կողմից նշանակված իրավաբան գիտնականների լիազորությունները դադարում են Հայաստանի Հանրապետության Նախագահի լիազորությունները դադարելու դեպքում նոր անդամի նշանակմամբ, այդուհանդերձ նախագծում առավել հստակեցվել է, որ նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ <i>ընտրվել</i> կամ <i>նշանակվել</i> Արդարադատության խորհրդի անդամ:</p> <p>4. Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն <i>Արդարադատության խորհուրդը իր քննարկման ենթակա հարցերի նախապատրաստման նպատակով, ինչպես նաև իր գործունեության կազմակերպման հետ կապված այլ հարցերով</i> ընդունում է աշխատակարգային որոշումներ:</p>
<p>«Կառավարություն»</p>	<p>Առաջարկվում է ներկայացված փաթեթի հետ ներկայացնել «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին»</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Մշակվել է համապատասխան օրենքի նախագիծ` առաջարկվող բովանդակությամբ:</p>

	<p>Հայաստանի Հանրապետության օրենքների նախագիծ, որով 9-րդ հոդվածում լրացնել 6-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.</p> <p>«6. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը չի տարածվում այն անձանց վրա, ովքեր սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առնվազն 10 տարի պաշտոնավարել են դատավորի պաշտոնում:</p> <p>Սույն մասով նախատեսված անձանց՝ Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հիմքերով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքերով դատավորի լիազորությունների դադարեցման դեպքերում նշանակվող կենսաթոշակի չափը հաշվարկվում է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար ստացած աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարի հանրագումարի) գումարի և զրո ամբողջ ինը տասնորդական գործակցի արտադրյալի 55 տոկոսի չափով:</p> <p>Եթե սույն մասով սահմանված կարգով հաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով հաշվարկվող կենսաթոշակի չափից, ապա տվյալ անձի դիմումի հիման վրա կենսաթոշակը նշանակվում է սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով»:</p>		
--	---	--	--